

## ԲԻՐՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՈԳԻՆ

(The soul of a people, by Fielding.  
Մի ժողովրդի ոգին, հեղ. Փիլլինգի)

Այն գիրքը, որի վրայ հրաւիրում եմ ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը, Անգլիայում արդէն հինգ հրատարակութիւն է տեսել 1898 թւականից: Իմ ձեռքում վերջին հրատարակութիւնն է\*),

Հեղինակը իր գիրքը անուանում է «Մի ժողովրդի ոգին» և տալիս բիրմանացի ժողովրդի բազմակողմանի նկարագիրը:

Հեղինակը վեց տարի անցկացնելով բիրմանական ժողովրդի մէջ, մասնակցելով թէ նրա ցաւերին և թէ ուրախութիւններին, ունենալով ծանօթներ և բարեկամներ ժողովրդի ամեն խաւերում, նախարարներից սկսած մինչև յետին շինականը, առիթ է ունեցել բարեխիղճ և բազմակողմանի կերպով ուսումնասիրելու բիրմանական ժողովրդի ոգին: Դրա հետ միաժամանակ հեղինակը շօշափում է նաև բուդյայական աստուածաբանական խնդիրներ, որպէս արտայայտութիւն նոյն ժողովրդի ոգու, և այսպիսով նրա գիրքը դարձել է չափազանց հետաքրքիր:

Ամբողջ դարեր անջատուած եւրոպական և ասիական քաղաքակիրթ ազգերից, հեռու նրանց աղմուկներից ու պատերազմներից, մինոյն ժամանակ ընութիւնից օժտուած հարուստ ձիբքերով խաղաղասէր բիրմանացին հարկ չէ ունեցել իր դարաւոր պատմութեան ընթացքում գոյութեան համար կոիւ մղելու:

\* ) Թարգմանուած է և ոռուերէն:

Բնութիւնն էլ իր կողմից օժանդակել է Բիրմանիայի խաղաղութեան, առաստ, բարեբեր երկիրը լիուլի բաւականութիւն է տուել ազգաբնակութեան անհրաժեշտ կարիքներին, և բիրմանացին առանձին ջանքերի պէտք չի ունեցել և հետեւապէս չի ստեղծել մի ինքնուրոյն քաղաքակրթութիւն: Բիրմանիան մինչև իսկ չի ունեցել փոքր ի շատէ կատարելագործուած քաղաքական կազմակերպութիւն: Անգլիական տիրապետութիւնից առաջ Բիրմանիան ներկայացնում էր մի վերին աստիճանի պարզ քաղաքակրթութիւն և քաղաքական բոլորովին նահապետական կազմակերպութիւն: Գիտութիւնների և արուեստների զարգացման աստիճանը շատ սուր դրութեան մէջ էր Բիրմանիայում մինչև վերջին պատերազմը: Բայց զարմանալի է դրա փոխարէն այն վեհանձն և բարձր բարոյականութիւնը, որ բիրմանական ժողովրդի կեանքի իսկական ուղեկիցն է, և այն անմեղութիւնը և նոգու կատարելութիւնը, որոնցով ներշնչուած է բիրմանացին որ ձգում է իրագործել կեանքի մէջ ոչ թէ առերես, ինչպէս մենք կամ առհասարակ եւրոպացիք, այլ ի բոլոր սրտէ անկեղծօրէն:

Պ. Ֆիլդինգ լաւ հասկանալով եւրոպական լուսաւորութեան բազմաթիւ պակասութիւնները՝ հրաւիրում է իր հայրենակիցների ուշադրութիւնը գէպի մի այլ աշխարհ—անմեղների աշխարհը՝ ծիշտ է բիրմանացին ապրում է բոլորովին նահապետական կեանքով, նրա պիտոյները սահմանափակ են, ինչպէս սահմանափակ են և նրա տեղեկութիւնները ուրիշ երկրների, ժողովրդների, գիտութիւնների, արհեստների մասին, ճիշտ է՝ նա ոսկեզօծ ապարանքներում չի ապրում, արագենթաց շոգեկառքերով և շոգենաւերով չի շրջում, հեռագիր, հեռախոս չ'ունի, համալսարաններում ուսում չի ստանում, բայց, ինչպէս նկատել է պ. Ֆիլդինգը, աւելի երջանիկ է, քան եւրոպացին:

Ինչումն է պարունակում բիրմանացւոց երջանկութեան այդ գաղտնիքը. եւրոպացին իր կրօնի բոլոր բարձր պահանջները աւելորդ է համարում կատարել իրեն անիրագործելի: Եւրոպան անունով միայն քրիստոնեայ է. եթէ եւրոպական քաղաքակրթութեան բոլորովին անծանօթ մի մարդ բերես Անգլիա, ասում է Ֆիլդինգ, և տեսնէ եւրոպացիների կեանքը, ապա ծանօթանայ նրանց կրօնի հետ, կարդալով Աւետարանը, նա երբէք չի հաւատայ, թէ այդ գիրքը եւրոպացու կրօնական վարդապետութիւնն է պարունակում, այս աստիճան հեռու են իրարից եւրոպացու կեանքը և իր կրօնական սղկրունքները: Բիրմանացին ուրիշ տեսակ է վերաբերում իր կրօնին: Նա

սովորեցնում է, ինչպէս պէտք է լինել արդար, և այդ արդարութեան և կատարելութեան համար չի խստանում ոչ մի պարզ կամ վարձատրութիւն հանդերձեալ կեանքում: Բուգրայականութիւնը հանդերձեալ կեանքի մասին ոչինչ չի ասում, և պահանջում է բարութիւն, սէր և արդարութիւն միայն յանուն բարութեան, սիրոյ և արդարութեան:

Բիրմանացու համար իր կրօնը նուիրական պարտականութիւն է, որ ամեն կերպ աշխատում է իրագործել: Մենք չենք ասում, որ ամեն մի բիրմանացի կատարելութիւնների տիպար է, ոչ բիրմանացին մարդ է և իրեւ մարդ սխալական է և մեղաւոր: Կան նրանց մէջ յանցաւորներ էլ, որոնք ոտի տակ են առնում ամենայն աստուածային և մարդկային օրէնքներ, բայց կեանքի գեղեցկութիւնը հէնց դէպի կատարելութիւն ձգուման մէջ է կայանում:

Բիրմանացի ժողովրդի ոգին ղեկավարող այս զլիսաւոր ակզրունքների վրայ են հաստատուած և նրա հասարակական հիմնարկութիւնները, որոնք հեղութեան, բարութեան, անշահախնդրութեան, գթութեան պատկեր են: Եւ այս ոգին ամենից աւելի երեսում է վանականութեան մէջ:

Մի ժողովրդի ներքին հոգեկան կեանքն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրա կրօնը: Այդպիսի ուսումնասիրութիւն ևս առաւել կարեոր է, երբ կրօնը լոկ տեսական վարդապետութիւն չէ, այլ ժողովրդի իրական ղեկավարը: Այդպէս է բուգրայականութիւնը բիրմանացի ժողովրդի համար: Ահա թէ ինչու հեղինակը հարկ է համարել առանձընապէս կանգ առնել այդ կրօնի վրայ:

Բուգրայի կեանքը շատերն են նկարագրել, բայց հեղինակը աւելորդ չի համարում էլի մի անգամ այդ մեծ մարդու պատկերը տալ, բայց ոչ թէ գիտնականորէն, այլ օգտուելով ժողովրդի կենդանի պատմուածքներից:

Նախ և առաջ՝ կարծիք կայ, որ բուգրայականութիւնը սաստիկ հարուստ է զանազան տեսակ սնութիւնապաշտութիւններով, բայց այդ բոլորը վերջին դարերի հեղինակների երեսակայութեան պատուղն է: Բուգրայականութիւնը այնպէս, ինչպէս որ նա կայ, ազատ է ամենայն տեսակ գերբնական հաւատալիքներից և սնութիւնապաշտութիւնից: Եւ այդ բնական է, որ բավիետե Բուգրան երբեք չէ քարոզել, որ ինքը գերբնական Արարածի առաքեալն է կամ մարգարէն, այլ սոսկ իմաստուն է, որ որոնում է ճշմարտութիւնը: Նա այդ ճշմարտութեան հասնում է զանազան փորձանքներից և տաննչանքներից յետոյ,

շնորհիւ երկար ու բարակ խոհերի և ոչ թէ իբրև աստուածային հրեշտակ՝ ճշմարտութեամբ ներշնչուած ի վերուստ երրեք նա իր քարոզութեան մէջ չի խօսում Աստծոյ մասին, որովհետև նա գիտէ Նրա մասին այն, ինչ որ գիտեն և միւսները նա միայն խօսում է արդարութեան մասին, որպէս բնութեան օրէնքի, որին հասել է իր հանճարի ոյժով, քարոզում է զնալ նոյն ճանապարհով ճշմարտութիւնը գտնելու համար: Իր կեանքում շատ տառապանքներ է կրել, շատ սխալներ է գործել, շատ անգամ յուսահատուել, բայց շնորհիւ իր հոգւոյ տոկունութեան, ճշմարտութեան է հասել. նա գտել է ճշմարտութիւնը և հաղորդել իր աշակերտներին:

Բուդդայականների կարծիքով ճշմարտութեան ճանապարհը բաց է ամենքի համար, և նրան կարող են հասնել իրանց վարդապետների պէս, եթէ ընթանան Բուդդայի ցոյց տուած ճանապարհով:

Ըստհանրապէս կարծւում է, որ Բուդդայի վարդապետութիւնը հերթում է բարձրագոյն էակի գոյութիւնը: Բայց դա սխալ է. Բուդդան չի խօսում գերագոյն էակից, որովհետև ինքը ոչինչ չը գիտէ. ահա թէ ինչ է ասում ինքը հեղինակը Բուդդայի մասին. «Զը կայ մի ուրիշ վարդապետ, որ այնքան պատկառելի և այնքան համեստ լինի. նա ասում է միայն այն, ինչ որ գիտէ, իսկ ինչ որ չը գիտէ, այդ մասին նա լուսում է»: Աստծոյ մասին նա գաղափար էր ստացել այն կրօնից, որով դաստիարակուել էր. այդ ճշմարտութիւնը նա չէր մերժում, այլ սովորեցնում էր, որ բնութեան մէջ միայն մի կեանք կայ, կենդանիների և մարդու կեանքը միևնույն աղբիւրից են բըղիւում, այն է Անյայտից: Մարդս մի առանձին էակ չէ այս աշխարհում, այլ նրա մասնիկն է, և ինչպէս որ մարդու մարմինը կենդանի մարմիններից լաւագոյնն է, նոյնպէս և մարդու ոգին կենդանիների ոգիններից ամենագերազանցն է: Մենք այնքան բարձր ենք կենդանիներից, որքան ցած ենք երկնքից, և մարդեթէ լաւ գործեր չը կատարէ, արդար չը լինի, չի կարող բարձրանալ դէպի երկինք:

---

Գոդամա Բուդդան Հնդկաստանի հիւսիս-արևելքում գըտնուած փոքրիկ թագաւորութեան արքայորդի էր: Նրա հայրը Տուդուդանա և մայրը Մայա կրթում էին իրանց որդուն՝ յուսալով, որ մի օր նա կը դառնայ աշխարհակալ կ'ընդարձակի իր տէրութիւնը:

Եւ յիրաւի փոքրիկ Գոդաման գեղեցիկ էր, ուժեղ, քաջ-

ու իմաստուն, և կարելի էր յուսալ, որ նա մի օր իր հզօր բազ-  
կի տակ կը միացնի ամբողջ Հնդկաստանը:

Բայց շրջապատող կեանքը դեռ նոր հասկացած նա ար-  
համարհեց ճոխութիւնն ու հարստութիւնը և ձգում ցոյց  
տուեց ճշմարտութիւնը որոնել մենաւորի արդար ու սուրբ  
կեանքով:

Ծնողները սաստիկ վշտացան: Նրանց համար Գոդամյի  
ցանկութիւնները վայել չէին նրա բարձր կոչման, ուստի, նր-  
ան պալատի շքեղութեան և կեանքի վայելքների հետ կապե-  
լու համար, ամուսնացրին մի սիրուն և ազնիւ աղջկայ, Եա-  
դուայայ իշխանակաստեր հետ, կարծելով որ սիրոյ զգացմուն-  
քը նրան աւելի կը գրաւի, քան իմաստութիւնը:

Բայց Եադուայան ևս համամիտ և համակիր եղաւ իր ա-  
մուսնու ձգումներին և աշխատեց ամեն կերպ վառ պահել  
նրա մէջ արդարութեան կայծը:

Գոդաման օրըստօրէ համոզւում էր, որ այս կեանքում  
իրան շրջապատող առարկաներից աւելի մեծ բարիք կայ և ա-  
ւելի որոշ կերպով համոզւում էր, որ պէտք է թողնել այդ ա-  
մենը և գնալ որոնել այդ բարիքը:

Եւ մի օր նրա վճիռը վերջնական եղաւ:

Մի անգամ, երբ իշխանը վերադառնում էր տուն, նրան  
յայտնեցին, որ կինը մի արու զաւակ է ծնել: Նա այլևս չը  
տատանուեց և այդ գիշեր վերջին անգամ կարեկցութեամբ նա-  
յեց իր կնոջը, որ քնած էր՝ մի ձեռքը նորածնի երեսի վրայ  
դրած: Մի բոպէ Գոդաման ուզեց բարձրացնել այդ ձեռքը և  
տեսնել իր որդուն, բայց նա այդ չ'արաւ, այլ հեռացաւ, որպէս-  
զի չը տեսնէ իր որդուն, չ'արթնացնի իր կնոջը, որովհետեւնա  
զգում էր, որ յետոյ անջատումը դժուար կը լինի, նա դեռ  
ճշմարտութիւնը չէր գտել, դեռ Բուդդա չէր, միայն որոնում էր  
լոյսը: Նա մարդ էր և իբրև մարդ սիրում էր իր կնոջը և նրա-  
նից անջատուելը զարհուրելի էր նրա համար:

Եադուայայի վիճակը բիրմանական կանանց ահազին  
կարեկցութիւն է ներշնչել, ահա ինչպէս է նկարագրում իր  
զգացմոնքը բիրմանացի մի կին: «Ի՞արկէ, նա (Եադուայան)  
շատ է կարեկցութեան արժանի, որովհետև ամուսինը թողեց  
նրան և իր փոքրիկին: Մի՞թէ դուք կարծում էք, որ երբ նա  
խօսում էր կրօնի մասին իր մարդու հետ, նրա մտքից անցը-  
նում էր, որ այդ խօսակցութիւնը պատճառ կը լինի նրա հե-  
ռանալուն: Եթէ նա այդ գիտենար, նա երբէք այդպէս չէր վա-  
րուիլ: կինը ոչ մի կերպով չէր նպաստիւ, որ իր ամուսինը հե-  
ռանայ իրանից, մանաւանդ՝ երբ տասը տարի ամուսնութիւնից

յետոյ երեխայ էր ունեցել. իհարկէ՞ նա շատ է արժանի կարեկցութեան»:

Ուստի «կնոջ համար ամենաբարձր կրօնն է իր մարդու ճշմարիտ սէրը, և ի՞նչ օգուտ նրան, եթէ նա ստանայ ամբողջ աշխարհ, բայց կորցնէ իր մարդուն»:

Եադուայայի ամբողջ կեանքը մի բողոք է դէպի իր ամուսու արարքի դէմ. թէև Դոդաման ստացաւ ամբողջ աշխարհը, բայց Եադուայան կը կամենար նորից տիրել նրան գուցէ և ամբողջ աշխարհի գնով. Դրա համար է, որ այս կնոջ պատմութիւնը խորին տպաւորութիւն է արել բիրմանական ժողովը վրայ: Այդ պատմութիւնը լիքն է տառապանքներով և մեծ իմաստ է պարունակում իր մէջ:

Երբ Գոդաման հեռացաւ տանից, նա դարձաւ հասարակ աղքատ և շրջելով տնից տուն՝ հաւաքում էր իր օրական ապրուսը: Իր մնացած ժամանակը նա նուիրեց ճշմարտութիւնը փնտրելու:

Այն ժամանակները մարդիկ կարծում էին, որ ճշմարտութիւնը չի կարելի գտնել աշխարհական կեանքում, որ աշխարհը չարութեան մէջ է ընկղմուած, ևով ուզում է արդարութեան հասնել, պէտք է անէ այն, ինչ որ բոլորովին հակառակ է աշխարհական կեանքին:

Առնասարակ մարդիկ շքեղ և մաքուը շորեր են հագնում, ուստի պէտք էր ցնցոտիներով շրջել. առնասարակ ուսում են շատ և համեղ կերակուրներ, ուստի պէտք է մարմինը քաղցածութեամբ տանջել, առնասարակ մաքրութիւն են պահանջում, պէտք է մարմին մաքրութեան վրայ ոչ մի ուշադրութիւն չը դարձնել և այլն:

Գոդաման ընտրեց այս ճանապարհը, բայց շուտով համոզվեց, որ դա չի տանում հոգեոյ կատարելութեան, որովհետեւ մարդ, որ միշտ մարմնով տանջում է, միշտ մտածում է մարմրնի մասին, չի կարող առանձին հոգեկան կատարելութիւն ձեռք բերել:

Յուսահատուելով իր առաջին անաջողութիւնից՝ նա հեռացաւ հարաւային մեծ անտառներից մէկի մէջ և առանձնացաւ այնտեղ՝ յուսալով, որ բնութիւնը նրան կը սովորեցնէ այն, ինչի որ ձգում է այդպիսի մեծ սիրով: Մեծամեծ նեղութիւններ կրեց այնտեղ՝ պահք պահեց, բայց բնութիւնը չը բացեց նրա առաջ կեանքի և կատարելութեան գաղտնիքը:

Վերջապէս նա իր հոգեոյ խորքում տեսաւ այն, ինչ փընտրում էր աշխարհում: Այն լոյսը, որ նա փնտրում էր, ամեն մարդ ունի իր մէջ, մենք նրանից երբեք չենք անջատուում,

շատ անգամ մենք ինքներս երես ենք դարձնում նրանից, կեղ-  
տոտում ենք մեղքով և ազիտութեամբ, բայց նա երբէք չի  
մեռնում, և երբ դիմենք նրան, միշտ վառ կը գտնենք:

Այս ճշմարտութիւնը գտնելուց յետոյ՝ Գողաման վերա-  
դարձաւ տուն, տեսաւ իր կնոջը, երեխային, և երկար տարի  
ապրելուց յետոյ՝ խորին ծերութեան մէջ «առաւելեալ աւուրբք»  
փոխուեց դէպի բարձրագոյն անդորրութիւն, որի համար իր  
ամբողջ կեանքը նուիրեց, իր հոգին պատրաստեց: Մեռնելու  
բոպէին նա ասաց իր աշակերտներին. «Յիշեցէք, որ կեանքը  
և մահը միևնուն են, երբէք մի մոռանաք այդ: Այս բանի հա-  
մար ես ժողովել եմ ձեզ միասին, որովհետեւ կեանքը և մահը  
միևնուն են»:

«Եկէք ինձ մօտ. ես քարոզում եմ այն, ինչ որ  
կեանքի ամենայն դժբաղդութիւններից ազատու-  
թիւն է բերում»:

(Քուգդայի խօսքերից)

Ի՞նչ ճշմարտութիւն էր քարոզում Գողաման, որ կատա-  
րելութեան համնելով՝ Բուգդա կոչուեց:

Համարեա բոլոր կրօնները, բայցի մի քանիսից, խոստո-  
վանում են, որ աշխարհս չարիք է, կրօնները նպատակ ունեն  
նոյնիսկ աշխարհի չարիքներից ապաստան լինելու դժ-  
բաղդ մարդկութեան համար: Բոլոր կրօնները պնդում են, որ  
մարդս անբաղդ է, բայց չեն բացարում պատճառը: Բուգդա-  
յականութիւնը միակն է, որ առնում իր վրայ այդ հարցը բա-  
ցատրել: Նա ասում է. «Մարդկանց դժբաղդութեան պատճառը այն  
է, որ նրանք կենդանի են. կեանքը և դժբաղդութիւնը անբա-  
ժան են, նոյնիսկ միևնուն բանն են: Միակ այն փաստը, որ  
մարդ ապրում է, կենդանի է, արդին դժբաղդութիւն է:

Միթէ կարելի է երևակայել մի մարդ, որ նստի մի կողմ  
և ասի. «ահա ես կատարեալ երջանիկ եմ. այս ըովէից սկսած  
ես կը կամենայի միշտ մնալ այս դրութեան մէջ առանց փո-  
փոխութեան»: Այսպիսի մարդ չի եղել, որովհետեւ մարդ միշտ  
փոփոխութիւն է ցանկանում, նա ձանձրանում է ներկայից և  
ցանկանում է ապագան, բայց երբ գալիս է այդ ապագան, նա  
տեսնում է, որ դա անցեալից լաւ չէ: Երջանկութիւնը գտնում  
է երեկուայ և վաղուայ մէջ, բայց երբէք այսօրուայ: Երիտա-  
սարդութեան հասակում մենք նայում ենք դէպի առաջ, ծերու-  
թեան—դէպի յետ:

Բայց ինչ բան է փոփոխութիւնը, եթէ ոչ ներկայի մասը, Կեանքը փոփոխութիւն է, փոփոխութիւնը մահ է: Ահա այսպէս է մտածում բուդդայականը:

Կեանքը իբրև յարատե փոփոխումն իր մէջ պարունակում է դժբաղզութեան սաղմը, իսկ երջանկութիւնը պարունակում է միային գերագոյն անդորրութեան մէջ, որին և պէտք է ձգտի մարդը:

Բուդդայականի համար հանդերձեալ կեանք չը կայ պատրաստուած. մարդ մի անգամ է ապրում. այդ այն կեանքն է, որ մարդ ստանում է յաւիտենականութիւնից, և որ շարունակում է յաւիտեան: Եթէ այս կեանքը չարիք է, ամենայն կեանք չարիք է, ուստի բարին անդորրութեան մէջ է: Ուստի բուդդայականը պէտք է ձգտի բարձրագոյն անդորրութեան, իսկ համելու յաջողութիւնը միայն նրա ջանքերից է կախուած: Եւ Բուդդան ասում է.

Եղէք բարի, արդարադատ և մաքուր, սիրեցէք միմեանց, գթառատ եղէք, ստից խուսափեցէք, ճշմարիտը խօսեցէք, ահա այս է դուռն երջանկութեան: Զգացէք ձեր մերձաւորի ցաւերըը, կարեկցեցէք նրան, և սէրը կը տիրապետէ մարդկանց սրտերին: Սէրը այն զգացմունքն է, որ բժկում է մարդկային սիրտը, բայց պէտք է սիրել ոչ միայն մարդկանց, այլ բոլոր աշխարհը, բոլոր կենդանի արարածներին, որովհետեւ նրանց կեանքը միենոյն կեանքն է, ինչ որ մարդկանցը, որը անբաժան է բոլոր տիեզերքի մէջ սփոռուած կեանքի հետ և նրա մի մասն է կազմում և ոչ առանձին մի բան:

Բայց նախ մարդ պէտք է մտածի իր մասին: Նա պէտք է ինքն իրան ճշմարտասէր և գթառատ դարձնի: Նա պէտք է սիրի, որ նրան ևս սիրեն:

Ահա Բուդդայի կրօնը: Բայց դա ամենը չէ. Եթէ միայն սրա մէջ պարունակուէր բուդդայականութիւնը, դա կը լինէր մի քանի ուրիշ կրօնների կրկնութիւնը: Բայց բուդդայականութիւնը աւելի ևս առաջ է գնում: Արդարութիւնը, սէրը և ճշշմարտութիւնը—լաւ բաներ են, բայց դրանք միայն ճանապարհի սկիզբն են, փրկութեան դուռն են միայն, դեռ նրանք ինքնըստինքեան մարդուն չեն հասցնում բարձրագոյն անդորրութեան, նրանք չեն կարող փրկել մարդուն այս աշխարհի տառապանքներից: Երբ մարդ մաքրէ իր սիրտը սիրով, աղատէ իր անձը բարի գործերով և խորհրդով, այն ժամանակ կը տեսնի հետեւեալ ճանապարհը, որով պէտք է ընթանալ: Այն ժամանակ նա կը համոզուի, որ կեանքը չարիք է իսկապէս, որից պէտք է խուսափել, որ կեանքը—թշուառու-

թիւն է, և ով որ ուզում է հեռանալ չարիքից և թշուառութիւնից, պէտք է խուսափէ նոյնիսկ կեանքից: Մահը—այս կեանքի վերջը—նոր կեանքի սկիզբն է, ճիշտ այնպէս, ինչպէս որ եթէ ջրի ընթացքը մէկ տեղում փակես, նա կը բանայ իր համար անցք մի ուրիշ տեղում: Մէկի կեանքը խլել—նշանակում է ենթարկել նրան մի ուրիշ աւելի երկար և աւելի թշուառ կեանքի: Թշուառութեան վախճանը կայանում է բարձրագոյն անդորրութեան մէջ: Մարդ պէտք է հեռանայ այս աշխարհից, որ թշուառութիւն է: Եւ երբ նրա սիրու ձգտի դէպի այդ անդորրութիւնը, հոգին կը հասնի իր նպաստակին: Երկրի փոթորիկներից խոնջացած՝ նա կը հասնի երկինք, ուր չը կայ այլևս փոթորիկ, չը կայ պատերազմ, ուր տիրում է յաւիտենական խաղաղութիւն: Եւ այդ մահ չէ, այլ բարձրագոյն անդորրութիւն, այն է Նիրվանա, որին մենք պէտք է ձգտենք, և որ աշխարհային հոգսերի իսկական և միակ վախճանն է:

Անա այս է այն պարզ կրօնը, որ բոլորովին ազատ է գաղտնափներից, սրբագործութիւններից, խորհուրդներից ու ծէսերից, և որպէսզի մարդ համոզուի, որքան վեհ և գեղցիկ է դա, բաւական է մի հայեացք ձգել նրան հետեղների արդար ու բարոյական կեանքի վրայ: Հետևեալ գլուխները նպաստակ ունեն ցոյց տալու այդ կեանքի բոլոր գեղեցկութիւնները:

«Միրեցէք միմիանց և ապրեցէք խաղաղութեամբ»:  
(Քուղայի խօսքելից)

Երբ անգլիացիք եկան Բիրմանիան նուաճելու, նրանք շուտով համոզուեցին, թէ որքան նեշտ է այդ, որովհետև բիրմանական տէրութիւնը չ'ունի պաշտպանուելու համար ոչ բանակ, ոչ զէնք, ոչ էլ հմուտ մարդիկ: Մանաւանդ վերջին պակասութիւնը շատ զգալի դարձաւ, երբ անգլիացիք գահընկեց արքն բիրմանացւոց թագաւորին և ժողովուրդը մնաց բոլորովին անգլուի: Զը կաը նաև ազնւականութիւն, որ սովորաբար կանգնած է լինում ժողովրդի և միապետի մէջ և որ հարկաւոր դէպքում կարող է իր վրայ առնել երկրի զինուորական դեկավարութիւնը: Բիրմանիայում բոլորն էլ հաւասար գիւղացիներ էին, ուստի թագաւորի անկումից յետոյ մնացին անգըլուի և հարկագրուեցին շուտով գլուխ խոնարհեցնել հզօր նուաճուների առաջ:

Բայց այսաեղից եղրակացնել, թէ բիրմանացիք զուրկ են-

քաջութիւնից, սխալ կը լինէր, որովհետև մասնաւոր դէպքեռում նրանք զանազան ժամանակ մեծամեծ քաջութիւններ ցոյց տուին: Նրանց քաջագործութիւններն աւելի ևս զարմանալի կը լինեն, եթէ ի նկատի առնենք, որ նրանց կրօնը ոչ մի կերպով չէ խրախուսում նրանց դէպի այդպիսի գործեր: Քրիստոնէութիւնը թէև սպանութեան դէմ է եղել ըստ իր վարդապետութեան, բայց միշտ սրբագործել է հայրենիքի և կրօնի համար մղուած պատերազմը և այդպիսի դէպքում սպանութիւնը ոչ միայն յանցանք չի համարել, այլ նրանց գործողներին ամենամեծ հերոսներ է հռչակել, շատերին սրբերի կարգը անցըել և ամենքին հանդերձեալ կեանքում դրախտ է խոստացել: Ահա թէ ինչ է ասում անզլիացի հեղինակը բիրմանացիների կուի մասին.

«Բուդպայականութեան մէջ զիջումն չը կայ, ու օրէնք է, և ոչինչ կարող չէ փոփոխել նրան: Օրէնքը յաւիտենական է, և նրանից բացառութիւն չի կարող լինել: Բուդպայի օրէնքը պատերազմի դէմ է—ամենայն տեսակ պատերազմի դէմ, բացառութիւն չի կարող լինել: Այնպէս որ իւրաքանչիւր բիրմանացի, որ պատերազմում էր մեզ դէմ, գիտէր, որ մեղանչում է, նա այդ անում էր բաց աչքերով և չէր կարող երևակայել ոչ մի բացառութիւն իր օգտին: Բանակում նստած և նայելով աստղերին՝ նա չէր կարող երևակայել մի որևիցէ զօրութիւն, որ հովանաւորէր նրան ի վերուստ և քաջալերէր: Նրան պատերազմելու ոչ ոք չէր օգնում: մեր զնդակները և սրերը արքայութեան դուռը չէին բաց անում: Վանականները չէին կարող գալ, փակել մեռնողի աչքերը՝ խոստանալով վարձատրութիւն երկնքում: Նա մեղաւոր էր և պէտք է երկար և սաստիկ տանջուէր արդարութեան օրէնքները ոտնակոխ անելու համար»:

Բիրմանական տէրութիւնը օտարագիններին աւար գարձաւ զլիխաւորապէս իր կենտրոնական կառավարութեան թերութիւնների պատճառով: Եւ իսկապէս եւրոպական տեսակէտից այդ տէրութիւնը վերին աստիճանի թշուառ դրութեան մէջ էր գտնւում: Երկրի պետն էր թագաւորը, որը անսահման իշխանութիւն ունէր, իհարկէ՝ զուտ իրաւաբանական, որովհետև փաստապէս նրա իշխանութիւնը յենուած չը լինելով մի որևիցէ դասակարգի կամ զօրքի մրայ՝ չէր կարող հզօր և աղդեցիկ լինել:

Թագաւորից յետոյ հետեւում էր իսկոյն շինական ժողովուրդը, որի անդամները միմեանց հաւասար էին: Թէև թագաւորին շրջապատում էին մինիստրներ, բայց նրանք էլ շինա-

կան ժողովրդից էին և իրանց աշխարհահայեցողութեամբ ոչնչով չէին տարրեւում միւս գիւղացիներից: Դատաստանական և կառավարչական կոչումները չէին բաժանուած, ուստի և աստիճանաւորի անօրէնութեանց դէմ բողոքել անհնարին էր:

Մնացեալ երկիրը բաժանուած էր մի քանի մասերի, և ամեն մի մասի վրայ թագաւորը կուսակալ էր նշանակում, որ շատ անգամ միայն խօսքով կախումն ունէր թագաւորից, բայց իսկապէս անսահման տէր և միապետ էր իր նահանգում, ուստի և շատ անգամ խստաբար կեղեգում և հարատահարում էր ժողովրդին:

Ուրեմն՝ կենտրոնական և բարձր կառավարութիւնը շատ վատ էր թիրմանիայում, բայց թիրմանական ժողովուրդը գոյն էր նրանից և չէր մտածում ապստամբել և իր վրայից ձգել այդ լուծը, որովհետեւ կառավարութիւնը ժողովրդի ներքին գործերի մէջ համարեա չէր խառնւում: Նա միայն հարկեր էր ժողովում և ուրիշ ոչինչ: Դրա շնորհիւ ինքնավարութիւնը լայն կերպով զարգացած էր ժողովրդի մէջ, և իրանց բոլոր գործերը սեփական ոյժերով էին հոգում, ինքեանք կառավարում իրանց հողային գործերը, իրանց մէջ գործածում տեղական տուրքերը ևայն: Այս ինքնավարութիւնը վերին աստծանի լաւ հետևանքներ ունէր, և կենտրոնական կառավարութեան արժանաւորութիւնը այն էր, որ նա չէր խանգարում այդ ինքնավարութեան և գրանով նսեմացնում էր իր մնացեալ բոլոր վատ կողմերը:

Բուգդայական վանականութիւնը կառավարչական գործերում բոլորովին չէր խառնւում: Բուգդայականութեան տեսակէտից աշխարհական իշխանութիւնը, փառքը—ոչ մի արժէք չ'ունին, ուստի և վանականը բոլորովին պէտք է հեռու մնայ այդ ամենից: «Բայց ժամանակ առ ժամանակ կրօնականները թոյլ են տալիս պաշտպան հանդիսանալ թշուառներին և հարըստանարուածներին. շատ անգամ նրանք միջնորդ և բարեխօս են դառնում թագաւորի կամ կուսականների առաջ՝ ինդրելով նըրանց ողորմածութիւնը դէպի յանցաւորները ևայն: Սրանով սահմանափակում է նրանց քաղաքական գործունէութիւնը:»

Գիւղական համայնքը, ինչպէս վերեւում ասացինք, կառավարում էր ինքն իրան: Նա ընտրում էր իր միջից մի աստիճանաւոր, որ համարեա բոլոր տեղական պիտոյքները մատակարարում էր և այնչափ լաւ, որ ոչ մի կողմից երբէք տըրատունչ և գանգատ չէր լսւում: Նա էր ժողովում գիւղի ներկայացուցիչներին և նրանց խորհրդով սահմանում հարկերը: Իւրաքանչիւր մարդ իրաւունք ունէր իր ձայնը բարձրացնել,

իր կարծիքը յայտնել: Եթէ գիւղում պատահէր մի անձնաւուրութիւն, որ ընդհանուր կարծիքով վնասակար մարդ էր, նրան արտաքսում էին գիւղից:

Զը նայելով այսպիսի նահապետական կառավարութեան ձևին՝ Բիրմանիայում լուրջ յանցանքների թիւը քիչ էր, բայց երբ սկսեցին անզիւխական պատիժները և ոստիկանական իշխանութիւնները, յանցանքների թիւը կամաց-կամաց աճեց:

Ափսոս՝ որ այդ ամենը անցաւ կամ անցնելու է, այլև երբէք չը կրկնուելու համար: Կենցաղավարութեան ձևերը կ'անցընեն, բայց այդ ժողովրդի ոգին կը մնայ միենոյնը, քանի որ բուդայականութեան կրօնը պինդ է ժողովրդի սրտում: Բուդայականութեան համար զոյութիւն չ'ունի իշխանութիւն, նա անպայման աղատութեան, հոգւոյ կատարելութեան կրօն է և իրրե արդարութեան վարդապետութիւն՝ կարօտ չէ երկրաւոր իշխանութեան: Երա զէնքն է—հոգւոյ կատարելութեան աւետարանը: Եւ այդ զէնքից զատ, այդ զօրութիւնից զատ ուրիշ զօրութեան կարօտ չէ: Դրանով էլ նա այնքան նզօր է, որ կը կարողանայ ընդդիմադրել բոլոր քաղաքական հարստահարութիւններին և իր դրօշակը պահպանել:

Վերին աստիճանի հետաքրքիր է բիրմանական ժողովրդի հայեացքը յանցանքի և պատժի վրայ:

Մի անգամ, ասում է հեղինակը, անզիւխական սպաներից մէկը յայտնեց ոստիկանութեան, որ 30 բուլիս փող է կորսուել նրա բնակարանից: Երկար վնտրելուց յետոյ նա իմանում է, որ զուլը իր բիրմանացի ծառան է, մի ջահիլ տղայ: Սա խոստովանեց, թէ յանցանքի պատճառն այն է եղել, որ իր քոյրը փող է խնդրել նա չի ունեցել, իսկ պատրաստ, սեղանի վըրայ եղած փողը նրան գայթակղիցը է: Ջահիլ բիրմանացուն դատաւորը 6 ամիս բանտ է նստեցնում: Բանտից գուրս գալով, նա նորից գալիս է իր հին տիրոջ մօտ և ինդրում է ընդունել ծառայութեան: Սպան բացէրաց մերժում է նրա խնդիրը՝ իրրե բանտարկուած մարդուն՝ իր մօտ առնել: Եւ իսկապէս, մեր տեսակէտից, բանտը աւելի շատ է արատաւորում, քան թէ նոյնիսկ յանցանքը, որովհետև բանտում շատ է փշանում մարդ: Խեղճ բիրմանացի երիտասարդը չէր կարողանում հասկանալ այդ... նա նայում էր պատժի վրայ բիրմանացոց տեսակէտից, այսինքն իրրե քաւութեան վրայ: Պատիժը—իրրե վրէժինդրութիւն—անհասկանալի է բիրմանացուն: Եթէ մի յանցանք է գործուած, մենք դատում ենք այսպէս—օրէնքը խախտուած է, յանցաւորը պէտք է տանջանք կը է, որպէս հասարակական վրէժինդրութիւն: Բայց որպէսպի ուրիշներին ևս

խրատ լինի, հարկաւոր է մի քիչ էլ խիստ վարուել յանցաւորի հետ, այսպիսով ուրեմն յանցաւորը կրում է պատժի մի մասը, որ իր մեղքի վարձատրութիւնը չէ, նա կրում է ուրիշների համար: Բիրմանացոց տեսակէտից նախ և առաջ պատժիմը վրցէժինդրութիւն չէ, այլ քաւութիւն, ուստի յանցաւորը յայտնի պատժի կրելուց յետոյ քաւում է իր մեղքերը և դառնում հասարակութեան հաւասար անդամ:

Եթէ պատժիմը քաւութեան—այսինքն յանցաւորին ուղղելու նպատակ չ'ունի, նա անօգուտ է. ամեն մի պատիժ այն ժամանակ միայն խորհուրդ ունի, երբ նա ձգտում է յանցաւորին նորից ուղղի ճանապարհի բերել, և եթէ նա համնում է իր նպատակին, այլևս հարկ չը կայ այդ յանցաւորին մեղաւոր համարել և նրանից հեռանալ: Եւ պատժիմը ունենալով միակ նպատակ յանցաւորին ուղղելը, ոչ պէտքից աւելի է լինելու, ոչ էլ պակաս, այլ այնքան, որքան հարկաւոր է յանցաւորին ուղղելու համար: Դրանից պակասը վատ է, որովհետև կարող է իր նպատակին չը հասնել, դրանից աւելին խստասրտութիւն է: Ամեն մի մարդ իր գործերի համար է պատասխանատու, ոչ ոքի տեղ նա պատիժ կամ պատասխանատութիւն չը պիտի կը: Հետևաբար և ոչ մի յանցաւոր չը պէտք է պատժուի ուրիշներին օրինակ լինելու համար: Դա խստասրտութիւն է:

Առհասարակ կենցաղավարութեամբ բիրմանական ժողովուրդը օրինակելի է: Վերին աստիճանի աշխատասէր լինելով հանդերձ՝ նա միւնոյն ժամանակ աշխատանքը համարում իրեն միջոց կեանքի պիտոյքները հայթայթելու և ոչ թէ հարստութիւններ դիզելու միջոց. ուստի թէն բոլորը աշխատում են, բայց այնքան, որքան հարկաւոր է ապրելու համար: Բիրմանացոց մէջ չը կան մեծամեծ հարուստներ, բայց միւնոյն ժամանակ չը կան նաև աղքատներ, որ ուտելիքից կամ խմելիքից զուրկ լինին: Փողը բիրմանացու աչքում չ'ունի այն նշանակութիւնը, որ մենք ենք տալիս. նա նայում է փողի վերայ իրեն ապրելու և ոչ թէ իրեն նոր փող ձեռք բերելու միջոց, ուստի նա չի դիզում նրան, այլ իր համեստ պիտոյքներից աւելորդը խսկոյն տալիս է բարեգործական նպատակների, շնում է վանք կամ ուսումնարան կամ հանգստութեան տուն մեծ հանգարիչի մօտ կամ քաղաքում, ուր բոլոր հանապարհորդները հանգստութիւն են գտնում, իսկ մնացեալ ժողովուրդը աօն օրերին հաւաքում է այնտեղ, խօսում, զուարձանում և բուդդայական բարձր կրօնական ծշմարտութեանց վերայ խորհում ևայլն: Շինում են նաև տաճարներ, որոնք զմայլեցնում են իրանց շքեղութեամբ

և հոյակապութեամբ, բայց տաճարներից կամ և այնպիսիները, որոնք շատ փոքրիկ են և համեստ:

Տան կահկարասիքը շատ համեստ է. մի քանի աթոռ, սեղան, սունդուկ և համարեա ուրիշ ոչինչ. բայց բիրմանացին կարօտ չէ աւելի շքեղ կահաւորութեան. նա աւելի շատ սիրում է տանից գուրս, մեծամեծ ծառերի ստուերների տակ ազատ օգում նստել, ուր գրաւում է նրան հիանալի կլիման, բիրեղային օդը, հարաւային արեգակի ոսկէ ճառագայթները, կամ լուսնի արծաթափայլ լոյսը, խաղաղ և մեղմ զեփիւոփ շունչը:

Ծնորհիւ դրամական կամ ցեղական դասակարգերի բացակայութեան՝ բիրմանական ժողովուրդը ներկայացնում է բոլորպիին հաւասար անդամներից կազմուած մի խոշոր ընտանիք: Նրանց կերակուրը, տները, կահկարասիքը, զուարձութիւնները միևնոյնն են կամ շատ քիչ են զանազանում միմիանցից: Բիրմանացին փոքրութիւնից ընաելացած է ինքնօգնութեան: Նա ապրում է իր կեանքով, մտածում է իր խելքով, ըմբռնում է կեանքը իր ժողովրդի հասկացողութեամբ, զգում է իր սրբառով և կարիք չ'ունի բազմաթիւ գրքերի—բնութիւնն է նրա գիրքը, ժողովուրդն է նրա իմաստութեան աղբիւրը: Եւ երջանիկ է: Կրօնն է ուսուցանում նրան երջանկութեան այդ եղանակը. «Ամեն մի մարդու նպատակն է երջանկութիւնը, բայց ամենաբարձր երջանկութեան կարելի է հասնել, երբ հրաժարուես աշխարհից»:

Գուցէ բիրմանական ժողովուրդը գրականութեան, արուեստի և միացեալ արտաքին քաջութեան մէջ երբէք փայլուն տեղ չը բռնի, բայց իր հոգեկան յատկութիւններով նա այժմ էլ ամենամեծ ազգերից մէկն է աշխարհիս վրայ:

Բուզգայական գաղափարը Աստծոյ մասին բոլորպիին վերացական է: Աստուած մեր հոգեկան աչքից բարձր է գտնըւում, ուստի նա երկրի վրայ չէ կարող ունենալ ներկայացուցիչներ. նա կարօտ չէ ոչ ծէսերի, ոչ արարողութիւնների. նրա օրէնքները պարզ են և յաւիտեան: Մարդ ինքը միայն կարող է իր փրկութեան ալղբիւրը լինել, ոչ ոք չի կարող աջակցել նրան այդ գործում, ոչ ոք չի կարող արձակել կամ կապել ուրիշ մեղքերը. մարդ միայն ինքը է պատասխանատու իր մեղքերին և հետեաբար ինքն միայն կարող է նրանցից իր հոգին որբել և կատարելութեան հասնել:

Եւ նրանց վանականները սոսկ դաստիարակիչներ, ուսու-

ցիշներ են և ոչ թէ միջնորդ երկնքի և երկրի մէջ։ Մասնաւորապէս նրանք երեխաների կրթութեամբ են պարապում։

Բուղդայական վանականութիւնը պատմականօրէն զարգացել է այն միաբանութիւնից, որ առաջին անգամ իրբե աշակեաներ՝ ժողովուել են Բուղդայի մօտ, ով որ ձգտել է կատարեալ կենաց, եկել է վարդապետի մօտ, և այժմ էլ, ով որ ձըգտում է այդպիսի կեանք վարելու, մտնում է վանք։

Բոլորովին սխալ կը լինէր բիրմանական վանականերին մեր ճգնաւորների և խոտաճարակ միայնակեացների հետ համեմատելը, որովհետեւ առաջինների նպատակը չէ և երբէք էլ չի եղել՝ իմաստ ծոմապահութեամբ կամ մի ուրիշ կերպով մարմինը տանջիլը. ընդհակառակը, նրանք հոգում են մարմնի մասին, բայց այնքան, որքան հարկաւոր է առողջ կեանք վարելու համար։ Նրանք ուտում են պարզ բուսական կերակուր, հագնուում են լայն, արձակ գեղնադրոյն շորեր, պէտք է աղքատ լինեն, բայց մաքուր թէ հոգւով և թէ մարմնով։

Կրօնաւորական կարգը մտնելու համար հարկաւոր չէ ոչ մի պայման, բացի հոգեկան կատարելութեան ձգտումից։ Ոչ ուսման վկայական է հարկաւոր, ոչ ոստիկանական ձեականութիւններ։ Ամեն մարդ, որ ցանկանում է մտնել վանք, տալիս է խոստումն անընչասիրութեան, ժուժկալութեան և ուրիշ ոչինչ։ Եթէ շուտով տեսնի, որ նրա համար ծանր է վանականի լուծը, նա կարող է թողնել և դառնալ իր նախկին դրութեան, ստիպողականութիւն չը կայ բոլորովին։ Եւ շատ անգամ պատահում է, որ մի քանի տարի վանական կեանք վարելուց յետոյ նորից վերադառնում են իրանց պարապմունքներին։ Ժողովրդի համարեան բոլոր արու անդամները մի քանի ժամանակ վանական են եղած և նորից վերադարձած իրանց դրութեան։ Կանայք վանական կեանք համարեան չեն վարում։ Տիրմանացւոց կարծիքով կինը սրբութեան այնքան ձգտութիւնում է ունի։ Ամուսնոյ սէրը և զաւակների հոգուը նա գերադասում է սրբութիւնից։

Առաւոտեան վաղ, երբ դեռ արեգակի ճառագայթները նոր են լուսաւորել աշխարհ, դուրս են գալիս վանականները իրանց գեղին շորերով, իրանց աշակերտների հետ միասին, ձեռքերին մի-մի աման և ծանր քայլերով զնում են գիւղ իրանց օրուան ապրուստը խնդրելու։ Ամեն մի տանից դուրս է գալիս մի երեխայ կամ մատաղանաս աղջիկ և կամ ինքը տանտիկինը և զնում է դրանց ամանը մի բուռ բրինձ կամ միրգ կամ հաց։ Վանականներին ողորմութիւն տալը մեծ վարձք է համարւում, ուստի ամեն մէկը տալիս է առատութեամբ, ինչ որ ունի։ Վանոյեմբեր, 1903.

հականները հաւաքում են աւելի քան թէ իրանց հարկաւոր է, բայց աւելորդը նրանք բաժանում են իրանց աշակերտներին, աղքատներին և ճանապարհորդների: Անցնում են գիւղից և գալիս վանք և մնացեալ օրուայ մասը խորհրդածութեամբ, ընթերցանութեամբ կամ մանկավարժութեամբ պարապում: Սաստիկ հիւրասէր են նրանք, ուստի նրանց գուռը բաց է ամենքի համար: Ով ուզէ լինի, կարող է մտնել վանքը, այնտեղ մնալ, որքան ուզինայ. բոլոր ժամանակը նա կը գտնի այնտեղ վերին աստիճանի ջերմ հիւրասիրութին, ուտելիք և ըմպելիք: Ժողովուրդը խիստ է դէպի իր վանականը, եթէ նա իր կոչումը չի կատարում, սրբութեան շաւղից շեղում է և անբարոյականութիւն է մտցնում բարքերի մէջ, նրան առհասարակ արտաքսում են: Ահա թէ ինչու վանական բարքերը մաքուր են և անարատ: Ժողովուրդի վրայ նրանք մեծ ազդեցութիւն ունին և վայելում են նրանց կողմից մեծ յարգանք. երբ մի հասարակութեան մէջ վանական լինի, անպատճառ առաջին տեղը նրան կը նստացնեն, մինչև անգամ թագաւորը կանգնում է և տեղ է տալիս վանականին. նրա հետ խօսելու ձեն անգամ ուրիշ է: Հասարակ առօրեայ լեզուն շատ ստոր է համարւում վանականի հետ խօսելու համար:

Աշխարհային հոգսերին, այսինքն քաղաքականութեան, պատերազմներին, երկրի կառավարութեան բոլորովին մասնակից չեն վանականներն, այդ նրանց գործը չէ: Նրանց գործն է Բուղդայի բարձր վարդապետութեան մասին խորհելը և անարատ կեանքը, և դրա համար միայն վայելում են յարգանք և պատիւ ժողովրդից:

Մանկավարժութեամբ թէն պարապում են նրանք, բայց ոչ իրեւ կոչումն, այլ իրեւ պատշաւոր պարապմունք: Ուսման պաշարը, որ տալիս են աշակերտներին, շատ աղքատ է. գրել, կարդալ, մի քիչ թւարանութիւն, ահա ամենը: Այնուամենայնիւ նրանք գիտութեան, ճշմարիտ գիտութեան դէմ չեն և հետաքրքրում են. բայց կարող են արդեօք հաշտեցնել գիտութիւնը իրանց կոչման հետ, այդ ապագան ցոյց կը տայ:

Նրա թշերը արշալուալից գեղեցիկ են. նրա աշքերը ծովի խորքից խոր. երբ նա փռում է իր գանգուրներն ուսերին, նման է գիշերի, որ իջնում է լեռների վրայ:

(Բիրմանական սիրոյ երգ)

Բիրմանացւոց ժողովրդի տեսակէտից՝ տղամարդը և կինը բո-

լորովին հաւասար են. կրօնը և օրէնքը նրանց մէջ զանազանութիւն չի գնում. նրանք շատ անգամ տեսնում են, որ մարդը աւելի ընդունակ է իր գործերում, իսկ կինը—իր. ուստի նրանք հաւաքար յարգանքի արժանի են. իրաքանչիւրը նրանցից իր առանձին արժանաւորութիւնն ունի:

Կինը եթէ այր մարդու գայթակղութեան պատճառ է լինում, մեղաւորը կինը չէ, այլ մարդու վատ հակումն. ուստի կինը մեղաւոր չէ, և նրան արհամարհելու հիմք չը կայ:

Կինը բոլորովին ազատ է. նա ունի իր առանձին սեփականութիւնը և վայելում է բոլոր քաղաքացիական իրաւունքները:

Այնուամենայնիւ բիրմանացի այր մարդու տոկունութիւնը, հանճարը և խորհուրդը գերակշուռաւմ է, բայց այդ հանգամանքը երբէք տեղիք չի տուել բիրմանացւոց ատրկացնել կնոջը. և կինը նրանց մօտ վայելում է այն ազատութիւնը, որ չէ վայելում ոչ մի ուրիշ երկրում: Կինը իր կրթութիւնը տանն է ստանում: Աղջիկների համար չը կան այնպիսի դպրոցներ, ինչպիսին են տղայոց համար, որովհետեւ աղջիկները վանքի դպրոցները չեն այցելում: Այդ ընտանեկան դաստիարակութիւնը առողջ է ու մարդասէր: Նրանք շատ պարզ և միևնույն ժամանակ իմաստուն հայեցակէտի տէր են շրջապատող առարկաների մասին: Այր մարդը նրանց պատկերանում է ոչ իբրև հրեշտակ և ոչ էլ իբրև գազան: Այր մարդու վրայ նրանք նայում են իբրև այր մարդու վրայ և ուրիշ ոչինչ:

Ամուսնութիւնը, ինչպէս և համարեա ամբողջ աշխարհում, լինում է ծնողների կամքով. այստեղ, ինչպէս և ամեն տեղ, աղջիկները մեծաւ մասամբ հնազանդ են իրանց ծնողաց կամքին և համոզուած, որ այդ է ամենալաւը: Բայց այդ չի նշանակում, որ նրանք ազատ չեն իրանց ընտրութեան մէջ. գուցէ ոչ մի երկրում այնքան ռոմաններ չեն պատահում, որքան Բիրմանիայի բանաստեղծական բնութեան գրկում, նրա դարաւոր ծառերի ստուերների տակ, լրւսնի ազօտ լոյսի կամ արեգակի ոսկեփայլ ճառագայթների ներքեւ: Օրիորդը դուրս է գալիս, նատօւմ է պատշգամբի վրայ, երիտասարդը գալիս և մեղմ խօսում է նրա հետ. շատ անգամ գալիս են մի քանի երիտասարդներ: Ամենքին օրիորդը կ'ընդունի սիրելութեամբ, կը խօսի, գուցէ և կը կերակրի իր ձեռքով պատրաստ «չէյրութով» (բրինձեայ փլաւ), բայց մէկի փոխարէն միայն նա ինքը կ'ուտի և դրանով նրան համբուրած կը լինի և յայտնած իր սէրը:

Եթէ առանձին արգելքներ չը կան, ծնողները ուրախու-

թեամբ կը տան իրանց աղջկան այն երիտասարդին, որ նը-  
րա սիրան է ընտրել. բայց պատահում են և այնպիսի դէպ-  
քեր, երբ ծնողները արգելում են ամուսնութիւնը, և այն ժա-  
մանակ շատ անգամ աղջիկը իր տնից հեռանում է, զնում ան-  
տառը, այնտեղ է գալիս և նրա տարգածուն, և այնտեղ գուցէ  
մի քանի մօտ ծանօթների, բարեկամների հովանաւորութեան  
տակ նրանք տօնում են իրանց հարսանիքը, մինչև որ ծնող-  
ների խիստ սիրառ մեղմանայ, և նրանք կարողանան նորից  
գալ արիւնակիցների մօտ:

Շատ անգամ այս փախստական հարսանիքների պատճառը  
օրիորդն է լինում, նա ինքն է խրախուսում երիտասարդին  
հետեւ իրան. «կինը աւելի անհամբեր է», ասում է բիրմանա-  
ցին և դրա մէջ է տեսնում կնոջ այդ վարմունքի բացատրու-  
թիւնը: Թէ որքան բորբոքուած սիրով կարող է սիրել բիրմանա-  
ցի կինը իր ընտրեալին, ցոյց է տալիս հետեւալ արկածը, որ  
պատմում է հեղինակը.

«Ես տեսայ մի օրիորդ տղամարդու շոր հագին, որ սպանուած  
էր ապստամբների բանակի վրայ յարձակման ժամանակ: Նա  
հետեւ էր իր սիրածին և յարձակման ժամանակ վեր առել սուր և  
հրացան նրա կողքին պատերազմելու, և վիզն ու ուսը վիրա-  
ւորել: Շըջապատղներից ոչ ոք առաւօտեան մթնալուսին չէր կա-  
րողացել իմանալ, որ դա օրիորդ է: Նա մեռաւ մի ժամից յե-  
տով, և թէև ես տեսեւ եմ շատ տխուր պատկերներ շատ երկը-  
ներում պատերազմի և խաղաղութեան ժամանակ, բայց այդ  
աղջկայ յիշատակը, որ մեռնում էր զինուորներից մէկի ձեռքե-  
րի վրայ, ողբում էր իր կեանքում կուսական անտառի ստուե-  
րի տակ, առանց իր սեռից մէկի օգնութեան, առանց իր ծնող-  
ների միխթարութեան, միշտ կենդանի է իմ երկակայութեան  
մէջ իբրև ամենից հզօրը և ամենից տխուրը:

Ամուսնութիւնը բիրմանացւոց մօտ չի սրբագործուում կը-  
րօնի կողմից. դա մի աշխարհական գործ է, մի ընկերութիւն  
է, որ կրօնի հետ կապէ չ'ունի, որովհետեւ Բուդդայի կրօնին ամե-  
նախիստ հետեւողները բոլորովին չեն պսակւում: Միակ պայ-  
մանը, առանց որի ամուսնութիւնը ալօրինի է համարւում,  
երկու կողմի ազատ համաձայնութիւնն է, և նաև ծնողաց հա-  
մաձայնութիւնը այն ժամանակ, երբ ամուսնացողներից մէկը  
դեռ կատարելահասակ չէ:

Առասարակ ամուսնութիւնները կատարւում են առանց  
շքեղութեան, որքան կարելի է՝ համեստ. հրաւիրում են միայն ա-  
մենամօտ ազգականներին և բարեկամներին. դրա պատճառը օ-  
րիորդի ամօթիածութիւնն է, նա չի ուզում, որ իր սէրը, ա-

ամուսնութիւնը, իր սրտի գաղտնիքը ամենին յայտնի և խօսակցութեան առարկայ լինի:

Մոնելով իր ամուսնու տունը՝ նա չի կորցնում իր անունը, այլ պահպանում է և ստորագրում իր անունով և ոչ ամուսնու: Իր գոյքի տէրը միայն ինքն է, և դրա վրայ ամուսինը ոչ մի իրաւունք չ'ունի, նա կարող է նոյնպէս բազմացնել այդ գոյքը, որովհետև բիրմանական կանայք պարապում են զանազան մանր գործերով, մանր առևտուով: առաւօտեան ամեն մի բազարում գուր կը տեսնէք բիրմանական կանանց՝ բրինձ, միրգ, շոր և ուրիշ մանր-մունը բաներ ծախելիս:

Ընտանիքի մէջ տիրում է առհասարակ սէր և խաղաղութիւն, մանաւանդ որ կինը և մարդը միշտ հաւասար են ըզգում միմեանց, և կինը երբէք չի երևակայում իրան՝ մարդուն ստրկացած:

Իր շրջապատողների հետ նա ազատ է խօսելու, երթեւ-կութիւն անելու, միայն երբ իր մարդը տանը չէ, նա օտար այր մարդկանց երբէք չի ընդունի: հակառակ դէպքում վարկը կ'ընկնի:

Կանական կեանքը շատ քիչ է տարածուած կանանց մէջ. կանայք վանքերում շատ քիչ են, հարիւր այր վանականին դէմ մի կին վանական հազիւ է դուրս գալիս: Կինը շատ սերտ կիրապով է կապուած իր օջախի, հօր, ամուսնու, երեխաների հետ, որ կարողանայ թողնել նրանց և սրբութեան հետեւ:

Միայն վերին աստիճանի յուսահատութիւնը կարող է ստիպել նրանց թողնել աշխարհը և վանք մտնել: Այնուամենայնիւ նրանք շատ կրօնասէր և բարեպաշտ են:

Ապահարզանը վերին աստիճանի հեշտ է Բիրմանիայում: Այն ամուսինները, որոք հաշտութեամբ չեն կարողանում ապրել միմեանց հետ, դիմում են գիւղի ծերերին, որոնք տօն օրերում հաւաքուած են լինում հանգստութեան տներում, պատմում են նրանց իրանց անբաւականութիւնների մասին և խնդրում են ապահարզան տալ, բայց ծերերը հեշտութեամբ չեն համաձայնում, նրանք դիմումամբ յետաձգում են մի քանի ամսով: այսպիսով ամուսինները հնարաւորութիւն են ունենում հաշտուել, եթէ կարելիութիւն կայ: Եւ այդ պատահում է երբեմն:

Եթէ այնուհետև գարձեալ ամուսիններից մէկնումէկը գայ խնդրէ ապահարզան, նրանք տալիս են անպայման՝ ի նկատի առնելով, որ ուր սէրը և հաշտութիւնը ցամաքել է, այնտեղ իսկական ընտանիքան կեանք չի կարող լինել:

Ապահարզան ստանալու համար հարկաւոր չէ՝ ինչպէս մեզ

մօռ՝ ամուսնական անհաւատարմութիւն, այն էլ ապացոյցներով, վկաներով և այլն։ Ամեն մի անգամ, երբ որեկիցէ պատճառով ընտանեկան կեանքը անտանելի է դաշնում, ապահարզանը տրւում է։ Զը նայելով դրան՝ բիրմանացւոց մօռ կնոջ և մարդու միմեանցից բաժանուելը շատ սակաւ է պատահում։ Նրանցից իւրաքանչիւրը զգալով՝ որ կարող է կորցնել իր կեանքի ընկերին, եթէ նրան դժբախտացնի, ապրում է սիրով և ապրում է հաշտութեամբ, և խաղաղութիւնը տիրում է բիրմանացւոց օջախի շուրջը։

Բիրմանացին չի սիրում ուրիշի գործերին խառնուել։ Նըրա կարծիքով ամեն մի մարդ ազատ է իր ձանապարհն ընտըրել, և ոչ ոք իրաւունք չ'ունի նրան համոզելով կամ բոնի խանգարել, քանի որ նա վնաս չի բերում ուրիշներին։ Բիրմանացին համոզուած է, որ ամեն մարդ իր անելիքը աւելի լաւ գիտէ, քան թէ ուրիշը։ Եթէ զուք փորձ էք փորձում ինքնաւսպանութեամբ վերջ գնել ձեր կեանքին, և նա տեսնում է այդ, նաև չի յարձակուի ձեզ վրայ և չի ազատի ձեզ մահից։ Ո՛չ նա ձեզ ազատ կը թողնի, որովհետև նա յարգում է ձեր ներքին ես-ը և կարծում է, որ զուք ձեր անելիքը նրանից լաւ գիտէք։ Եթէ բիրմանացուց ինքը հարցնես խորհուրդ հօգնութիւն, այդ ուրիշ հարց է, նա մեծաւ ուրախութեամբ և սիրով կ'օգնէ քեզ, ինչքան կարող է։ բայց ինքնաբերաբար երբէք չի միջամտի։ Ուստի Բիրմանիայում բնակող օտարազգիները բոլորովին ազատ կերպով պարում են իրանց կրօնի և բարոյականութեան համեմատ, և չէ պատահում, որ բիրմանացիք հալածն կամ խառնուեն նրանց գործերին։ Եթէ օտարազգին ուղղում է ընդունել բիրմանական կրօնը, նրանք ուրախանում են, բայց եթէ ոչ, նրանք երբէք չեն հալածում։

Վերին աստիճանի բարերար է բիրմանացին, հիւրասէր և ուրիշի կարծիքին համբերող։ Խօսելիս նա զգուշանում է գործածել կոպիտ և անքաղաքավարի բառ կամ ձեւ, կամ մի կերպով ձեզ վիրաւորել։ նա կարծում է, որ քաղաքավարութիւնը հարկաւոր է ոչ այնքան ուրիշի համար, որքան իր համար։ Մարդ չը պէտք է այնպէս վարուի, որ ինքն իրան վիրաւորի։

Բիրմանացին սպանութիւնը մերժում է, ուստի և միս չէ գործածում բոլորովին։ Մսավաճառները և որսորդները ընդհանուր ատելութեան առարկայ են, և առհասարակ բիրմանացիներից չեն, այլ չնդկաստանից գուրս եկած պանդուխտները

Զկնորաներ պատահում են բիբրմանացիներից, և ձուկ վաճառողները նրանց կանայքն են մեծաւ մասամբ. բայց ձուկը իբրև պաղարիւն կենդանի այնքան կարելցութեան առարկայ չէ, որքան չորքոտանի արարածները։ Որսը իբրև զուարձութիւն՝ անծանօթ է Բիբրմանիայում։

Թոչուններն ևս մեծ հոգատարութեան առարկայ են Բիբրմանիայում, բայց նրանց չեն ուտում։ Շատ անգամ բակում տեսնում ես շատ հաւեր, բաղեր, բայց նրանք նշանակուած չեն խոհանոցի համար։ Երբ տեսնում են, որ եւրոպացիք պատրաստում են սպանել թոչուններին, նրաք փող են տաղիս, աղաչում, պաղատում, որ չը սպանեն թոչուններին և արձակեն նրանց։ Մինչև անգամ թունաւոր օձերը, կարիծները ևայլն՝ չեն ենթարկում հալածանքի։

Բիբրմանական գիւղերում ձիները, կովերը և ուրիշ կենդանիները բոլորը գեր, մաքուր և լաւ պահուած են։ Երբէք չեք տեսնի, որ մարդ խիստ վարուի անսառւնների հետ։ Նըրանք նոյնիսկ աշխատում են ազգել օտարազգիների վրայ, որ գութ ունենան դէպի կենդանիները։ այսպէս՝ մի քաղաքից միւսը գնում էին դիլիժանսներ, որոնց վարչութիւնը շատ անփոյթ էր էր դէպի ձիերը և չարչարում էր նրանց։ Բիբրմանացիք երբէք չեն նստում այդ դիլիժանսները, չը նայելով մեծ տարածութեանը՝ ոտով էին գնում կամ առանձին կառք վարձում, իհարկէ տասնապատիկ թանգ գին գճարելով։

Անձնական արժանիւրութիւնը պահանջում է, որ նա գթութեամբ վերաբերուի առկասարակ թոյլերին, լինի դա մարդ կամ կենդանի։ Պահպանելով նրանց կեանքը և արժանաւորութիւնը՝ նա պահպանում է իր արժանաւորութիւնը, իր կեանքը։ Նա թէկ չէ հասկանում «noblesse oblige» բառերի նշանակութիւնը, բայց իր կեանքում միշտ հետևում է այդ երկու բառերի բարձր և մարդասէր իմաստին։

---

Բիբրմանացւոց՝ մահուան մասին ունեցած հասկացողութիւնը պարզելու համար մէջ ենք բերում նշանաւոր Մապադարի պատմութիւնը՝ քաղելով ֆիլդինգի գրքից։

Բուգդայի օրերով, Թաւատի քաղաքում ապրում էր մի վաճառական, որ ունէր բազմաթիւ ստրուկներ, որոնց հետ նա սիրով վարում էր իբրև իր ընտանիքի անդամների հետ։ Մի օր նա գնեց մի վայելչակազմ երիտասարդ ստրուկ, որ բացի իր գեղեցկութիւնից՝ շատ համակրելի բնաւորութեան տէր էր։ Տիրոջ դուստրը, մատաղահաս Մապադար օրիորդը սիրահա-

ըուեց գեղեցկագէմ և առաքինի երիտասարդից և գաղտնի կերպով սկսեց այցելել նրան։ Նա գրողում էր իր սիրածին փախչել հայրենական տնից և ամուսնանալ իր հետ։ Բարի երիտասարդը հրաժարում էր կատարել օրիորդի կամքը՝ առարկելով, որ նրանց փախուստը իր կողմից ապերախտութիւն կը լինի տիրոջ դէմ, թէ աէրը շատ կը բարկանայ և այլն։ Օրիորդը սակայն պնդում էր շարունակ, և սիրահարուած երիտասարդը վերջապէս համաձայնուեց։ Մի գիշեր մի քիչ փող և թանգագին իրեր վերցնելով նրանք հեռացան տնից և գնացին մի հեռաւոր քաղաք, ուր վաճառականը չէր լինում։ Այստեղ նըրանք ամուսնացան, իրանց փողով վաճառականական գործ սկսեցին և երջանիկ ապրում էին. ունեցան նաև մի զաւակ։ Մի քանի ժամանակից յետոյ նրանք հարկադրուեցին անհրաժեշտ գործով ճանապարհորդութիւն անել՝ տանելով իրանց հետ և՛ երեխային, որ նոր էր սկսել քայլել։ Հասան մի անտառ, որտեղ կինը հիւանդացաւ։ Մարդը նրա համար ձիւղերից շինեց մի վրան, և այնտեղ կինը ծնեց երկրորդ արու զաւակը։ Մարդը թողնելով իր ընտանիքը՝ գնաց անտառ փայտ ժողովելու։ Խեղձ Մապաղան երկար սպասում էր նրա գալստեան, երեկոյեան մութը գետինը կոխեց, բայց մարդը չը վերադառն, գիշերը անցաւ, արշալոյսը ծագեց, բայց մարդը չէր վերադառնում։ Մապաղան առաւ իր նորածինը գիրկը, միւսի ձեռքից բռնեց և գնաց իր մարդուն որոնելու։ Շուտով նա գըտաւ նրան անշունչ և սառն դիակը։ Խեղձ մարդը օձից էր խայթուած։ Թշուառ Մապաղան ողբաց իր ամուսնու մահը, բայց նա քաջ կին էր և չը վհատեցաւ։ Նա շարունակեց իր ճանապարհը իր երկու մանուկների հետ։ Բաւականին ժամանակ նա յաջողութեամբ էր ճանապարհորդում։ Վերջապէս հասան մի գետակի։ Գետակը այնքան էլ լայն չէր, բայց սաստիկ արագահոս ու խոր, և փոքրիկը իր ոտով չէր կարող անցնել, իսկ խեղձ կինը դեռ այնքան չէր կազմուրուած, որ երկուսին ևս միասին կարողանար գրկել և անցնել։ Ուստի նա իր մեծ որդուն հրամայեց սպասել ափում իր վերադարձին և փոքրիկի հետ զգուշութեամբ անցաւ և դրեց նրան միւս ափին, դարձաւ դէպի առաջինը։ Բայց հազիւ նա հասել էր գետակի մէջ տեղին, երբ լսեց մի շփշփոց։ Յետ նայեց և տեսաւ, որ մի արձիւ իր նորածին բարձրացրել և տանում է. խեղձ կինը ճչաց արծւին վախեցնելու համար, բայց իզուր, թոշունը թուաւ և տարաւ իր հետ կնոջ նորածին զաւակին։ Միւսոյն վայրկեանին միւս երեխան կարծելով՝ որ մայրը ձիչով իրան է կանչում, մտաւ գետակը բայց արագ և հզօր հոսան-

քը գլորեց նրան, և խեղճ մանուկը ալիքների մէջ գտաւ իր վախճանը: Աննկարագըելի էր խեղճ մօր աղէտը: Մի քանի օրուաւ մէջ կորցրեց սիրելի ամուսնուն և երկու զաւակներին: Թշուառ կինը մնաց մնակ աշխարհի վրայ և մտածեց գնալ իր հօր մօտ: «Հայրս, մտածեց նա, այժմ ինձ կը ներէ, կը գթայ ինձ վրալ, որովհետեւ իսկապէս շատ եմ գթութեան արժանի», և գնաց դէպի իր հօր քաղաքը: Երբ երեկոյեան դէմ նա մըտնում էր քաղաք, տեսաւ երկու դագաղ. տանում էին թաղելու իր հօրն ու մօրը, որ միենյոյն ժամին մի օր առաջ մեռել էին: Կինը թշուառութիւնից և սրտի կակիծից խելագարուած պատառուեց իր զգեստները՝ և սկսեց անմիտ կերպով այս ու այն կողմ վազվղել: Վերջապէս նա գնաց Բուդգայի մօտ և պատմելով իր ցաւը՝ աղաչեց նրան, որ անպատճառ յարութիւն տայ իր սիրելիներին: Բուդգան փորձեց մխիթարել խեղճ կսոջը և ասաց, որ մահը անխուսափելի է ամենքի համար, թէ ամեն մարդ, որ ապրում է, պէտք է մեռնի, ուստի անօգուտ են և եսասիրական բոլոր մեր վշտերը և ողբերը, մահը իր աւարը յետ չի տայ, որովհետև հանգուցեալը անցընում է մի ուրիշ կեանք և այն կեանքից էլ մի ուրիշ մինչև որ համար բարձրագոյն անդորրութեան: Մարդ քանի որ ապրում է, պէտք է պատրաստ լինի մեռնելու: Կեանքը և մահը սերտ կապուած են միմիանց հետ, նրանք մի են:

Բայց թշուառ կինը չէր մխիթարուում և շարունակ խնդըրում էր Բուդգայից, որ կենանացնէ իր հանգուցեալներին:

Այն ժամանակ Բուդգան դարձաւ նրան և ասաց. «Գնա, գտիր կարմիր մանանեխի մի հատիկ, որը միայն բուսած լինի այնպիսի պարտիզում, որի մօտից մահ չի անցել»:

Մա-պա-դան ուրախացած տռն գնաց մանանեխի հատիկ գտնելու: Նա ուրախ էր, որովհետև կարծում էր, թէ շատ հեշտ է մանանեխի մի հատիկ գտնել, որ բուսնում է համարեած ամեն մի պարտիզում:

Մտաւ առաջին պարտէզը և ուզեց մանանեխը, նրան տուեցին, բայց երբ նա հարցրեց, որ այդ տունը մահը այցելել է, թէ ոչ, պատասխան ստացաւ, թէ նորերս է տան հայրը մեռել, միւս տեղում մայրը, երրորդ տեղում նոյնպէս: Կարճ, չը կար մէկ տուն, որտեղից մահը իր տուրքը առած չը լինէր, ամեն տան մէջ հանգուցեալ է եղել: Այն ժամանակ համոզուեց Մա-պա-դան, որ կեանքը և մահը միենոյնն է, թէ որտեղ կեանք կայ, այնտեղ և մահ պէտք է լինի, և թէ մահից ազատուել ուզեցողը պէտք է ազատուի և կեանքից, և թէ միակ միջոցը ազատուելու կեանքից և նրա թշուառութիւն-

Ներից այն բարձրագոյն անդորրութիւնն է, որ քարոզում էր կատարեալ վարդապետը։ Նա եկաւ վարդապետի մօտ, մտաւ նրա աշակերտների շարքը, նուիրեց իր կեանքը սրբութեան և կատարելագործութեան։

Այս պատմութիւնից կատարելապէս պարզ է լինում բուդդայականի հայեացքը մահուան վրայ։ Քանի որ կեանքը կայ, մահը նրա հետ կապուած է, որովհետև կեանքը և մահը միևնույն են։ Մահուան տառապանքից աղատուելու համար պէտք է ձգտել կեանքի տառապանքներից աղատուել սրբութեամբ, անարատութեամբ, համեմ այն բարձրագոյն անդորրութեան, որտեղ ոչ մահ կայ, ոչ էլ այս կեանքը իր բիւրաւոր թշուառութիւններով։

Այս աշխարհահայեցողութիւնն է մեր կարծիքով այն հիմնաքարը, որի վրայ շինուած է բուդդայականութեան վսեմ և բարձր վարդապետութիւնը։ Այդ վարդապետութեան հնարաւոր իրականացումը ներկայացնում է բիւրմանական ժողովրդի կեանքը իր բոլոր կողմերով։

Հ. ՔԵԶԵԿԵԱՆ